ՏԱՏԻԿ-ՊԱՊԻԿՆԵՐԻ ԽԱՂԵՐԸ՝ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՅԻՆ ԿԱՄՈՒՐՋ

Խաղերի նշանակությունը այսօր

Կամուրջ սերունդների միջև

Ավանդական խաղերը միավորում են տատիկ-պապիկներին և թոռներին, ստեղծելով հաղորդակցության նոր հնարավորություններ

Ազգային արժեքներ

Խաղերը փոխանցում են հայրենիքի ավանդույթները և ազգային արժեքները հաջորդ սերունդներին

Կյանքի դպրոց

Խաղերը սովորեցնում էին հարգանք, ընկերասիրություն, ճարպկություն, արագ կողմնորոշում և համբերություն

Տատիկ-պապիկների մանկության խաղերը ոչ միայն զվարճանք էին, այլև կյանքի դպրոց: Դրանք սովորեցնում էին հարգանք, ընկերասիրություն, ճարպկություն, արագ կողմնորոշում և համբերություն: Այսօր այդ խաղերը կարող են դառնալ կամուրջ՝ միավորելով սերունդներին և փոխանցելով ազգային արժեքները:

Խաղ 1. Մակարապետ

Խաղի էությունը

Փայտ քաշոցիկ, որի ժամանակ ընտրում են մակարապետին

Այս խաղի համար երիտասարդները հավաքվում են մրցակիցների շուրջը: Մրցակիցները նստում են գետնին, ոտքերը համապատասխանաբար միացնում հակառակորդի ոտքերին և մոտ ութսունից մեկ մետր երկարությամբ փայտը ձեռքերին մեկումեջ բռնելով և ուղիղ պահելով ոտքերից բարձր մոտ տասը սանտիմետր բարձրության վրա քաշում են դեպի իրենց հակառակորդին, և հերթով բոլոր երիտասարդները մրցելով ընտրում են ամենաուժեղ երիտասարդին, ով բոլորին կարողացել է քաշել դեպի իրեն:

Հաղթողի պարգևը

Հաղթող երիտասարդը ստանձնում է մակարապետի պաշտոնը

Պատվավոր պարտականություն

Առաջնորդել հարսանեկան թափորը դեպի հարսի տուն

Փորձություններ

Հաղթահարել հարսի տան փորձությունները

Դա կարևոր գործողություն է, որտեղ հաղթող երիտասարդը ցույց է տալիս իր պատրաստվածությունը և ստանձնում էր մակարապետի պաշտոնը, ով պիտի առաջնորդեր հարսանեկան թափորը դեպի հարսի տուն, որտեղ պիտի նա ևս կարողանար հաղթահարել նաև հարսի տան փորձությունները:

Խաղ 2. Չրչմանք

Չրչմանքը հայկական ավանդական խաղ է, որտեղ մասնակիցները օգտագործում են փոքր քարեր՝ 20, 30, 40 և ավելի: Խաղի հերթականությունը սկսվում է ավանդական վիճակահանությամբ, որը ինքնի ավանդական խաղ է:

01

Սկզբնական տեղադրում

Խաղաքարերը լցնում են խաղը սկսող մասնակցի բուռ սարքած ափերի մեջ

02

Առաջին փուլ

Խաղաքարերը պետք է վեր տետել և բռնել կորացրած մատների վրա՝ ափի հակառակ կողմում

03

Նետում և հաշվարկ

Քարերը պետք է վեր նետել և բռնել ափի մեջ, դնել խաղատեղից մի փոքր հեռու և սկսել հաշվել

04

Զույգ քանակ

Եթե քարերի քանակը զույգ է՝ կեսը պետք է դնել մի կողմ խաղացողի համար, որպես միավորների քանակ, մյուս մասը՝ ընդհանուր խաղի մեջ խաղարկելու համար

Շարունակություն

Մասնակիցը պետք է վերցնի խաղաքարերից մեկը, վեր նետելով գետնից հավաքի փռված խաղաքարերը: Պետք է ձգտել զույգ-զույգ հավաքել, որպեսզի իր միավորների քանակը շատ լրացնի:

Կորցրած հերթ

Եթե խաղի ընթացքում ձեռքը կպնում է այլ խաղաքարի, կամ չի կարողանում բռնել վեր նետած քարը ափի մեջ, հերթը անցնում է մյուս մասնակցին:

Հաղթողը: Այդպես խաղում են մինչև քարերի վերջանալը: Երբ մնում է երկու խաղաքար, ապա պետք է ձեռքի երեսով նետել վեր և բռնել ձեռքի ափով: Վերջում յուրաքանչյուր մասնակից սկսում է հաշվել իր հավաքած քարերը և հաղթում է նա, ով շատ քարեր է հավաքել:

Խաղ 3. Քարկտիկ

Խաղի հիմքը

Հինգ կլոր քարերով խաղ, որը խաղում էին դեռահաս աղջիկները, երբեմն նաև տղաները

Քարկտիկը հայկական ավանդական մոռացված խաղերից մեկն է, որը խաղում էինք մեր մանկության տարիներին: Այն խաղում էին դեռահաս աղջիկները, երբեմն, նաև տղաները: Խաղը խաղում են 2-5 հոգով: Այն խաղում են հինգ կլոր քարերով, իսկ հերթականությունը որոշվում է վիճակահանությամբ, որը նույնպես հին ավանդական խաղ է:

Յոթ փուլ

Քարկտիկը բաղկացած է յոթ փուլից, որոնց յուրաքանչյուրը ունի իր հատուկ կանոնները և դժվարությունը

Խաղացողներ

Խաղը նախատեսված է 2-5 մասնակիցների համար, ովքեր հերթով կատարում են տարբեր գործողություններ

Վիճակահանություն

Հերթականությունը որոշվում է ավանդական վիճակահանությամբ, որը ինքնի ավանդական խաղ է

Տատիկ–պապիկների խաղերը՝ սերունդների միջև խաղային կամուրջ

Տատիկ-պապիկների մանկության խաղերը ոչ միայն զվարճանք էին, այլև կյանքի դպրոց: Դրանք սովորեցնում էին հարգանք, ընկերասիրություն, ճարպկություն, արագ կողմնորոշում և համբերություն: Այսօր այդ խաղերը կարող են դառնալ կամուրջ՝ միավորելով սերունդներին և փոխանցելով ազգային արժեքները: